ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 26 >> ապրիլ 2017թ N 39

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2017 թվականի ապրիլի 14-ի N317-Ա որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը՝

1) կրթության բաժնի պետ (ծածկագիր՝ 69-2.2-23)

2) կրթության բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 69-2.3-19)

3) կրթության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 69-3.2-25)

2. Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 69-2.1-4) անձնագրում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) 4-րդ կետի <<հաշվետու են>> բառերից հետո լրացնել ՝ <<Վարչության կրթության բաժնի պետը և>> բառերը,

2) 5-րդ կետի առաջին պարբերության <<Վարչության գլխավոր մասնագետներից մեկը>> բառերը փոխարինել <<Վարչության կրթության բաժնի պետը, Վարչության գլխավոր մասնագետը>> բառերով ,

3) 5-րդ կետի երկրորդ պարբերության <<Վարչության գլխավոր մասնագետներից մեկի>> բառերը՝ <<Վարչության կրթության բաժնի պետի, Վարչության գլխավոր մասնագետի>> բառերով

3. Ուժը կորցրած ճանաչել՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N112 որոշմամբ հաստատված ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 69-2.3-17) (հավելված N 2) և ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 69-3.2-23) (հավելված N 3) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ